ՀՀ Արմավիրի մարզի «Գետաշենի միջնակարգ դպրոց» և «Շենավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝<<Շենավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ի տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը) (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թ. նոյեմբերի 5 -ից նոյեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, **« Շենավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ** -ում:

Մրցույթը տեղի կունենա **2021 թ. Դեկտեմբերի 9-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ Արմավիրի մարզի **«Շենավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ** -ում, հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Շենավան, 20-րդ փող. 1 շենք:

Տեղեկությունների համար դիմել հեռախոս՝ **098985959 /խորհրդի նախագահ/, 093861104 /խորհրդի անդամ**
էլ.փոստ՝ **armavir_shenavan @mail.ru**: